10054

336
4-21

1881

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՑԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՏՐՈՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՈՒՐԱՐԱԿԱՆ ԵՒ ԹՈՂԱԿԱՆ

Վ. ԱԽԵՐԱՑԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԷՆ

Կ. ՊՕԼԻՍ
ԳԱՎԱՌԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1888

336
4-21

12001

336
4-21

ԿԱՏԱՐԱԾՔԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՏՐՈՅ

7547

2708
39

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՏՐՈՅ

Յօդուած Ա.

Ազգային ուղղակի տուրքն երկու տեսակ է, կեդրոնական և թաղական։

Յօդուած Բ.

Իւրաքանչիւր ազգային անհատ որ չափահաս է և վաստակի տէր, պարտի այս երկու տուրքը միացեալ վճարել, որ տարեկան է, և բաժնի վրայ հիմնեալ։

Յօդուած Գ.

Մէկ բաժինն է մայրաքաղաքիս համար **20** ղրշ. արծաթ, իսկ գաւառաց համար **10** ղրշ։

Յօդուածք Դ.

Իւրաքանչիւր անհատ պարտի իւր կարողութեան չափով բաժին վճարել, որոյ հիմն է իւր երկօրեայ վաստակը։

Յօդուածք Ե.

Իւրաքանչիւր ոք ինք կ'որոշէ իւր տրոց բաժինը, համահաճութեամբ իւր Թաղական Խորհրդին. այն որ Պաշտօնական Ծանուցումէն մինչև մէկ ամիս կը յապաղէ իւր տրոց բաժինն որոշել, իւր այս իրաւունքը Թաղական Խորհրդոյ Թողած կ'ըլլայ, որով և Թաղական Խորհուրդն ինքնին կը սահմանէ այսպիսեաց տրոց բաժինը։

Յօդուածք Զ.

Թաղական Խորհուրդ.ը կը հաւաքեն ազգային տուրքն, իւրաքանչիւրն իւր Թաղին մէջ բնակող ազգայիններէն։

Յօդուածք Է.

Ազգային տուրքը մէկ անգամով կանխիկ կը վճարուի Մայիս ամսոյ սկիզբը։

Յօդուածք Ը.

Ելմտական տարւոյն մէջ իւր տուրքը չը վճարող անհատն որ և է պարագայի մէջ իւր ազգային իրաւունքն, այն է առուծախի և ճանապարհորդութեան համար խընդրուած ծանուցագիրները, նշանագրութեան, երդման, և այլ և այլ վաւերացմանց, քուէ տալու, այլ և այլ բողոքի, և խնդրագրի գործողութիւնները վայելելու համար՝ պարտի իւր յապաղեալ տրոց դումարը վճարել նախապէս։

Յօդուածք Թ.

Թաղական Խորհուրդ.ը իրենց հաւաքած տրոց կէսն՝ այն է Թաղային մասը կ'անցուցնեն իրենց Թաղային մտաւոր հաշուոյն և միւս կէսն՝ մայրաքաղաքիս մէջ՝ կը յանձնեն Պատրիարքարանի մտաւոր հաշուին, իսկ դաւառաց մէջ Առաջնորդարանին։

Յօդուածք Ժ.

Տրոց բաշխման և հաւաքման ծախքերը Թաղային մտաւորներուն կը վերաբերին։

Յօդուածք ԺԱ.

Պատրիարքարանի կամ Առաջնորդարանաց մէջ գործով եկող ազգայիններէն հաւաքեալ տրոց թաղային մասն ալ կը յանձնուի այն ազգայնոց բնակած թաղին թաղային մնտուկին։

Յօդուածք ԺԲ.

Առաջնորդարանաց գաւառական սընտուկներն իրենց դանձած տարեկան տրոց $^1/_4$ կը վճարեն Պատրիարքարանի կեդրոնական մնտուկին։

Յօդուածք ԺԳ.

Ամեն սահմանադրական տարեդլխէ 3 ամիս առաջ, այն է փետրվար ամսոյ մէջ՝ թաղական խորհուրդք կը քննեն և կը նըշանակեն թաղին մէջ բնակող ազգայնոց բնակութեան փոփոխութեամբ եւ կամ մահուամբ պակսածները, նորածինները, նորեկները, և տուրքի նոր մասնակցողները, ըստ այնմ կ'արձանագրեն, և իրենց կեդրոնին կը հաղորդեն։

Յօդուածք ԺԴ.

Վարչութիւնը կը հսկէ թաղերուն բաշխման և հաւաքման գործողութեանց և այս մասին հարկ եղած հրահանգները կուտայ։

ՄԱՍՆԱՒՈՐ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Յօդուածք Ա.

Մայրաքաղաքիս այն թաղերն որ իրենց թաղին մէջ սոյն կանոնագիրն ամբողջովին գործադրեն, իրենց եկեղեցւոյն քանչիղեր անունով կեդրոնական մնտուկին յատկացուցած դիւանական տուրքը վճարելէ պիտի ազատին։

Յօդուածք Բ.

Այն առաջնորդական վիճակներն որ իրենց գաւառին մէջ սոյն կանոնագիրն ամ-

բողջովին գործադրեն իրենց վիճակին Մոռ-
գաթա անունով՝ Կեդրոնական մնաուկին
յատկացուցած Դիւանական տուրքը վճա-
ռելէ պիտի ազատին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ։— Այն վանքերն՝ որ հով-
ուութեան թեմ չ'ունին, պարտաւոր են ըստ
առաջնոյն իրենց Մուգաթան վճարել։

Այն տեսարքը որ ազգային կեդր. Վարչութեան Տնտես. Տեսչութեան կնիքը չեն կրեր՝ անվաւեր են։

Ազգ. Կեդր. Վարչ.
Տնտես. Խորհրդարան
Գ. Բ. Մելիք

2013